


ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՍՏՆՈՒԹԻՒՆ

Posted on January 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Յարութ Տեր Դաւիթեան, Լոս Անճելըս, 8 Յունուար 2023

Click on [Heroism and Wisdom](#) to read the English translation of the article

Հազարամեակներու մեր պատմութիւնը լեցուն է բազմաթիւ հերոսներով եւ հերոսական արարքներով: Սակայն դժբախտաբար անոնց մեծամասնութիւնը արդիւնքը եղած են նեղ կացութիւններէ կամ տազնապալից իրավիճակներէ դուրս գալու ձգտումներու: Ինչպէս Պարոյր Սեւակ գեղեցկօրէն արտայայտած է՝ «երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար»: Ու «խենթ»երը, իմա՝ հերոսները կը տողանցեն մեր պատմութեան բոլոր հանգրուաններուն, եւ շատ անգամ անոնց կը պարտինք մեր գոյատեւումը: Հերոսները անոնք են, որոնք մեկնելով իրենց համոզումէն՝ որ կան իրենց անձերէն աւելի արժեքաւոր նպատակներ եւ կամ ծրագիրներ, կը նուիրաբերեն իրենց կեանքը անոնց իրագործման համար: Հետեւաբար, երբ աւելի խորը կը դիտենք, կ'անդրադառնանք, որ հերոսութիւն եւ ողբերգութիւն շաղկապուած են իրարու: Վկայ՝ մեր ազատագրական պայքարի ֆետայիներն ու պատերազմներու ընթացքին հերոսի կոչումը նուաճած մեր նահատակ մարտիկները: Հերոսները ընդհանրապէս եւ դժբախտաբար կ'ունենան ողբերգական վերջաւորութիւն:

Իմաստնութիւնը իմաստուն ըլլալու յատկութիւնն է, որ իր մէջ կը պարփակէ խոհեմութիւն, դատողութիւն, զգաստութիւն, հաստատակամութիւն, եւայլն: Երբ ակնարկ մը կը նետենք մեր պատմութեան վրայ, դժբախտաբար ականատես կ'ըլլանք, որ հերոսութիւններու հետ բաղդատած, իմաստնութիւնը պակասած է մեզի, որպէս զի կարենանք քննական մօտեցումով արժեւորել կացութիւնները եւ ըստ այնմ լուծումներ որոնել եւ լծովի անոնց իրագործման:

Իմաստնութիւնը իր մէջ կը պարփակէ նաեւ մեծ պատկերը տեսնելու կարողութիւնը, պետական ու ազգային շահը հատուածականէն աւելի գերադասելու անշահախնդրութիւնը, պատմութիւնէն դասեր քաղելու ընդունակութիւնը, ինչպէս նաեւ ապագան կանխատեսելու եւ ըստ այնմ պատրաստուելու շնորհն ու կամքը: Յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են որեւէ ազգի յառաջդիմութիւնը ապահովելու համար: Յատկութիւններ, որոնցմով դժբախտաբար ազգովին աղքատ եղած ենք եւ բաւարար աշխատանք չենք տարած, կարենալ բարելաւելու համար մեր այս տկարութիւնները:

Առանց հեռուն երթալու, եթէ աչքի առաջ ունենանք անցած երեսնամեակը, պիտի համոզուինք, թէ որքա՛ն բարգաւաճ կ'ըլլար մեր իրականութիւնը այսօր, եթէ իմաստնութեամբ գործած ըլլայինք: Թող մեր այս խօսքը չնկատուի ամերիկեան արտայայտութեամբ՝ «Երկուշաբթի առաւօտեան խմբապետութիւն» (Monday morning quarterbacking), երբ հեշտ կ'ըլլայ Կիրակի օրուան անցած խաղին պատահած սխալներուն մասին «քարոզ» կարդալը: Ամիջապէս յստակացնենք, որ ունեցանք իմաստուն առաջնորդներ, բայց դժբախտաբար հատուածականութեան ախտէն

տառապորդներու ժողովը այնքան բարձր էր, որ հրաժարեցուց եւ զգեստեց զանոնք:

Դաւաճան անուանուեցան անոնք, որոնք տեսնելով մեծ պատկերը, առաջարկեցին փոխ-գիշումներու գնով ապահովել այն, որ մեր կարողութեան սահմաններուն մէջ էր պահել: Սակայն Նախիջեւանը ազատագրելու եւ Պաքու հասնելու ամբոխավար կոչերու աղմուկը անլսելի դարձուց պատմահայր Խորենացիի «ոտքերդ վերմակիդ համեմատ երկարելու» խրատը հնչեցնողները: Նոյնիսկ Թուրքիոյ Նախագահ Պուրկիպայի եւ Եգիպտոսի Նախագահ Սատաթի փոխ-գիշումներու գծով Իսրայէլի հետ երկխօսելու օրինակին նշումը 1997-ին հրատարակուած մեր մէկ յօդուածին մէջ, մեզ ալ արժանացուց դաւաճանի պիտակին:

Ունեցանք ազգային շահը գերադասող առաջնորդներ, բայց անոնք զոհ գացին օտարի ձեռքին գործիք ծառայող պատեհապաշտներու: Ունեցանք Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութիւնը սերտած, վարչապետ Քաջազնունիի անհրականանալի Սելի շլացքէն խուսափելու եւ թուրքին հետ երկխօսութեան մտնելու դասը սորված առաջնորդներ, բայց «ազգայնականները» ապագային հռչակեցին զանոնք: Եւ «ամէնը կամ ոչինչ» մտայնութիւնը դաւանողներու արարքները մեզ հասցուցին այս օրուան, որ աւելի մօտ է ոչինչին, քան՝ ամէնուն:

Այս բոլորի մասին 1991-էն ի վեր «Մասիս» շաբաթաթերթին մէջ մեր հրատարակած յօդուածներով արտայայտուած ենք, նշելով հեռու թէ մօտիկ անցեալէն օրինակներ, դուրս գալու մեր կաղապարուած մտածելակերպէն եւ ընդգրկելու միջազգային զարգացումներու հետ քայլ պահող գործելաձեւ: Բազմիցս շեշտած ենք անձնասիրութիւնէ դէպի ազգասիրութիւն, ինքնախաբէութիւնէ դէպի ինքնաճանաչում, հատուածականէն դէպի պետական մտածողութիւն, պատրանքէն դէպի իրականութիւն ուստում կատարելու անհրաժեշտութեան մասին: Միշտ ալ մեզ տանջած է այն միտքը, որ ինչո՞ւ կը պատահին այս սխալները, երբ աչքի առջեւ են անոնցմէ խուսափելու օրինակները: Մեզ տանջած է նաեւ այն միտքը, որ կ'արժէ՞ ժամանակ յատկացնել եւ գրել, երբ փոփոխութիւն չես տեսներ: Բայց ինչպէ՞ս լռել, երբ կայ ցաւ, որմէ կարելի էր հեշտութեամբ խուսափիլ:

Դժբախտութիւնը հոն է, որ սերունդներ դաստիարակուեցան խեղաթիւրուած պատմութեամբ, տուրք տալով հատուածականութեան: Դժբախտութիւնը հոն է, որ սերունդներու դաստիարակութեան մէջ իրապաշտութիւնը զոհ գնաց զգացական գեղումներու: Պէյրութի, Փարիզի եւ կամ Լոս Անջելոսի մեր նստավայրերէն գոհացանք երգելով «Գնանք մենք Սասուն», առանց այդ ուղղութեամբ պատրաստելու մտքերն ու առնելու գործնական քայլեր: Երագով աւելի հեշտ էր ժամանակաւորապէս հրահրել զգացմունքը, քան՝ իրականութեան հետ ընդհարումով խթանել միտքը: Ու եկաւ օրը, երբ երագները բախուելով իրականութեան հետ, փշրուեցան:

Դժբախտութիւնը հոն է, որ ներկայիս ալ, ոչ մօտիկ անցեալի եւ ոչ ալ հեռու պատմութեան դասերէն օգտուելու ցանկութիւնը ակներեւ է մեր ժողովուրդին մէջ: Այդ

Իմաստնությունը, այդ մշակույթը կը պակասի մեզի: Թերթատեցեք մամուլը և պիտի համոզուիք, որ դժբախտաբար հոն աւելի ատելություն և մաղձ կայ, քան՝ ուսանելի հանդուրժողականություն: Աւելի բաժանարարություն կայ, քան՝ միասնականութեան ձգտում: Շատ ծանր կը կշռէ այս իրականությունը, մանաւանդ երբ աշխարհ կը բոլորէ անկայունութեան և անապահովութեան ժամանակաշրջան մը, որ պէտք է ստիպէ մեզի մէկդի դնելու մեր նախասիրությունները և ազգովին բոլորուելու Հայաստանի և հայ ժողովուրդի ապահովութիւնն ու գայատելումը երաշխաւորելու էական առաքելութեան շուրջ:

Հերոսութիւնը պոռթկում է, մինչ իմաստնութիւնը՝ ծրագրաւորուած աշխատանք: Եթէ այդ պոռթկումը իմաստնութեան արդիւնք չէ, ապա պիտի չծառայէ իր բուն նպատակին և կրնայ նոյնիսկ վնասել, յումպետս վատնելով մեր ունեցած պաշարը: Այս յօդուածին սկիզբը ըսինք, որ հերոսութիւն և ողբերգութիւն շաղկապուած են իրարու և հերոսները ընդհանրապէս կ'ունենան ողբերգական վերջաւորութիւն: Մեր համեստ կարծիքով, այդ շաղկապը կը կտրուի երբ հերոսութիւնը կը ծնի իմաստնութիւնէն: Այդ պարագային, փոխան հերոսի ողբերգական մահուան յիշատակման, մենք ցնծութեամբ պիտի գովերգենք կենդանի հերոսի սխրանքները:

Heroism and Wisdom

By Harut Der-Tavitian, Los Angeles, 8 January 2023

Our history of thousands of years is full of many heroes and heroic deeds. Unfortunately, most of them were the result of efforts to get out of challenging conditions or alarming situations. As Baruyr Sevak beautifully expressed: "When there is no way out, crazy people find a way." And the "crazies", i.e. the heroes, appear at all milestones in our history, and many times we owe our survival to them. Heroes are those who, stemming from their conviction that there are goals and or plans more valuable than their selves, dedicate their lives to their realization. Therefore, when we look deeper, we will realize that heroism and tragedy are intertwined. Case in point is the " fedayees" of our liberation struggle and our martyred fighters who earned the title of hero during the wars. Heroes will generally and unfortunately have a tragic ending.

Wisdom is the quality of being wise, which includes prudence, judgment, sensitivity, perseverance, etc. When we take a look at our history, we will unfortunately witness that, in comparison with acts of heroism, we have often lacked the wisdom to evaluate situations with an analytical approach and accordingly look for solutions and commit to their implementation.

Wisdom includes the ability to see the big picture, the disinterestedness of preferring the state and national interest over the individual and the faction, the ability to learn from history, as well as the gift and the effort to predict the future and prepare accordingly. Features that are necessary to ensure the progress of any nation.

Without delving into the distant past, if we bring the recent thirty years in front of our eyes, we will be convinced of how prosperous our reality would be today, had we acted wisely. Let our words not be considered "Monday morning quarterbacking" when it would be easy to give a "sermon" about the mistakes that happened in the last Sunday's game. Let us immediately affirm that we had wise leaders, but unfortunately, the voice of those suffering from the diseases of partisanship and egocentrism was so loud that it subdued, made them give up the ship or even eliminated them. Those who, seeing the big picture, suggested to secure through compromises what was within our capacity were called traitors. Regretfully, the cries of the mob to liberate Nakhichevan and reach Baku rang louder to those who voiced the advice of the historian Khorenatsi to "lengthen your legs according to your blanket". Even our citation in one of our articles published in 1997 of the examples of Tunisian President Bourguiba and Egypt's President Sadat advocating compromises with Israel earned us the label of a traitor.

We had leaders who prioritized the national interest, but they fell victim to opportunists who served as tools in the hands of foreign powers. We had leaders who had studied the history of the First Republic of Armenia and were aware of the remorse of Prime Minister Kachaznuni about getting dazzled by the glare of the unrealistic Treaty of Sevres and thus not entering into a dialogue with the Turks, but the "nationalists" declared them anti-nationals for advocating such a course. And the actions of those who profess the "all or nothing" mentality brought us to this day, which is closer to nothing than to all.

We have written about all of these in our articles published in the "Massis" Weekly newspaper since 1991, citing examples from the distant and recent past to get out of our stereotyped way of thinking and embrace a mentality that keeps pace with international developments. We have repeatedly emphasized the need to transcend from factionalism to nationalism, from self-deception to self-knowledge, from partisan to state thinking, from illusion to reality. We are always tormented as to why these mistakes happen when there are plenty of examples on how to avoid them. We are also tormented by the thought as to whether it is worth investing time and writing when you don't see any change? But how can we stay silent when there is pain that could easily be avoided?

The tragedy is that generations were brought up with a distorted sense of history, paying tribute to factionalism. The tragedy is that in the upbringing of generations, realism fell victim to emotional deviations. From our residences in Beirut, Paris or Los Angeles, we were satisfied with singing "Let's go to Sassoon", without preparing our thoughts and taking practical steps in that direction. It was easier to temporarily stimulate the feeling with a dream than to stimulate the mind by clashing with reality. And the day came when dreams collided with reality and shattered.

The tragedy is that the desire to benefit from the lessons of history, neither the recent nor the distant past, is evident among our people. We lack that wisdom, that culture. Look through the press and you will see that, unfortunately, there is more hatred and bile than educational tolerance. There is more division than striving for unity. This reality weighs very heavily nationwide, especially when the

world is entering a period of instability and insecurity, which should force us to put aside our differences and unite as a nation around the essential mission of guaranteeing the security and longevity of Armenia and the Armenian people.

Heroism is an outburst, while wisdom denotes meticulously planned work. If that outburst does not emanate from wisdom, then it will not serve its purpose and may even do harm, completely wasting the resources we have. We said at the beginning of this article that heroism and tragedy are intertwined and heroes will generally have a tragic ending. In our humble opinion, that connection can be broken when heroism is born from wisdom. At that time, instead of commemorating the tragic death of the hero, we will joyfully praise the exploits of the living hero.

There are no comments yet.